Մարզային և տեղական իշխանությունների դերը Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման և գործողությունների ազգային ծրագրի տեղայնացման մեջ

Քաղաքականության համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունում նորածինների սեռերի անհամամասնությունը սկսել է աստիճանաբար աճել 1990-ականների սկզբից: 1995 թ.-ին 100 աղջկա հաշվով ծնվել է 110 տղա, 1998 թ. այդ ցուցանիշը գերազանցել է 115-ը, իսկ 2000 թ.-ին հասել է 120-ի (նորածինների սեռերի համամասնության բնական մակարդակ է համարվում 104-106 տղայի հաշվով 100 աղջիկ ցուցանիշը): Հետագայում, սակայն, որոշակի բարելավումներ նկատվել են նորածինների սեռերի անհամամասնության կրճատման մեջ: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ նորածինների սեռերի համամասնության շարժընթացը վերջին տասը տարիներին հետևյալ պատկերն ունի.

- 2012-ից 2017 թթ. ընթացքում ցուցանիշը նվազել է՝ 115 տղա՝ 100 աղջիկ հարաբերակցությունից դառնալով 110 տղա՝ 100 աղջկա հաշվով.
- 2018-ից 2020 թթ. ցուցանիշը եղել է կայուն՝ 111 տղա՝ 100 աղջկա հաշվով.
- 2021 թ. հարաբերակցությունն իջել է՝ 108.8 տղա 100 աղջկա հաշվով.
- 2022 թ. առաջին կիսամյակի արդյունքներով 100 աղջկա հաշվով ծնվել է 111 տղա, սակայն պատկերը կամբողջանա տարեկան տվյալներն ամփոփելուց հետո:

Սեռերի հարաբերակցության գործակիցն ըստ ք. Երևանի և ՀՀ մարզերի



* Տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2021 թ. Հայաստանում սեռերի համամասնության ամենամեծ շեղումը գրանցվել է Արմավիրի և Լոռու մարզերում, որոնց հաջորդում են Շիրակը և Սյունիքը: Լոռին միակ մարզն է, որտեղ սեռերի անհամամասնությունն աճել է 2016 թ.[1] համեմատ, մինչդեռ 2016 թ. Լոռիում սեռերի անհամամասնությունը ամենափոքրն է եղել:

[1] Ելակետային են ընդունվել 2016թ. տվյալները, որոնք արտացոլված են 2017 թ.-ին իրականացված հետազոտության մեջ:

Պտղի սեռի խտրական ընտրության (ՊՍԽԸ) կանխարգելման նպատակով, առողջապահության և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ որոշմամբ, 2020 թ.-ից Հայաստանում իրականացվում է ՊՍԽԸ կանխարգելման գործողությունների ազգային ծրագիրը: Այդուհանդերձ, գործողությունների իրականացման մեջ բավարար չափով ներգրավված չեն մարզային և տեղական իշխանությունները, և, ծրագրի տեղայնացման նպատակով, անհրաժեշտ է ներդնել վերջիններիս ներգրավվածության ընդլայնման մեխանիզմներ:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև 2022 թ. հունիսին Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման տարածվածությունը և պատճառները գնահատելու նպատակով իրականացված հետազոտության արդյունքները՝ սույն փաստաթուղթն առաջարկություններ է ներկայացնում ՊՍԽԸ կանխարգելման մեջ մարզային և տեղական իշխանությունների դերի ընդլայնման վերաբերյալ:

Հետազոտությունից քաղված արդյունքներ

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ՊՍԽԸ-ն հատկապես տարածված է մարզերում, մասնավորապես՝ ակներև է գյուղական բնակավայրերում: Եթե Երևանում հարցվածները չեզոք են այս կամ այն սեռի երեխայի նախապատվություն տալու հարցում, ապա մարզերում պատկերն այլ է: 2017 թ. համեմատ 2022-ին չեզոք վերաբերմունք արտահայտող հարցվողների տեսակարար կշիռը նվազել է: Գեղարքունիքում այս ցուցանիշն ամենացածրն է՝ 60%, որը 2017 թ. համեմատ 15%-ով ցածր է: Հետաքրքրական է նաև, որ Լոռիում, Սյունիքում, Երևանում, Տավուշում և Վայոց ձորում կանայք ավելի շատ նախապատվություն են տալիս աղջիկ երեխաներին:

Տղաներին ամենաշատը նախապատվություն են տալիս Գեղարքունիքի մարզում: Այս մարզից հարցման մասնակիցների 33%-ը նշել է, որ իրենց ընտանիքում նախապատվությունը տալիս են տղաներին: Տավուշը միակ մարզն է, որտեղ աղջիկներին ընտանիքում նախապատվություն տվողների տեսակարար կշիռը ավելի մեծ է, ընդ որում՝ 2017 թ. համեմատ 2022-ին այս ցուցանիշն աճել է: Մյուս մարզերում տղաների նախապատվությունը մնացել է նույնը:

Գեղարքունիքի մարզն առաջատար է նաև առաջին հղիության ընթացքում ուլտրաձայնային հետազոտություն չանցած հղիների տեսակարար կշռով՝ 24%: Ընդհանուր առմամբ, գյուղական և քաղաքային համայնքներում ուլտրաձայնային հետազոտություն չանցածների տեսակարար կշիռն ավելի բարձր է, քան Երևանում:

Առաջարկություններ

Վերոնշյալ տվյալներն ակնհայտ են դարձնում գործողությունների ազգային ծրագրի իրականացման հարցում մարզերում թիրախավորված և հետևողական աշխատանքի անհրաժեշտությունը՝ պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելման մեջ մարզային իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, տեղական հասարակական և մասնավոր կազմակերպությունների, շահագրգիռ այլ կողմերի ներգրավվածության խթանման նպատակով: Այդ համատեքստում, առաջարկվում են հետևյալ գործողությունները.

- մշակել մեխանիզմներ՝ ապահովելու Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023 թթ. գործողությունների ազգային ծրագրի մասնակցային մշտադիտարկումն ու գնահատումը, հասկանալու սեռերի համամասնության շեղումներն ու դրանց վրա ազդող գործոնները՝ միջամտություններն ավելի հասցեական և արդյունավետ դարձնելու նպատակով.
- խթանել մարզային և համայնքային իշխանությունների ներգրավվումը գործողությունների ազգային ծրագրի տեղայնացման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեջ.
- զարգացնել մարզային և տեղական իշխանությունների ներկայացուցիչների կարողությունները՝ գենդերազգայուն քաղաքականությունների մշակման, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման ոլորտներում.
- մարզային և պետական լրատվամիջոցներով և պետական տարբեր ծրագրերի միջոցով անդրադառնալ երեխաների իրական և ցանկալի թվերի միջև ճեղքվածքը վերացնելու հիմնախնդրին, այդ թվում՝ ներգրավվելով հանրային լայն ճանաչում ունեցող անձանց:

Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության վերաբերյալ հետազոտությունը ներառում է հարցում՝ երբևէ հղիություն ունեցած 1920 կնոջ շրջանում, և որակական վերլուծություն՝ հիմնվելով ֆոկուս խմբային քննարկումների վրա:

Հետազոտությունն իրականացվել է «Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում. աջակցություն տարածաշրջանային, ազգային և հարավ-հարավ նախաձեռնություններին» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից՝ ՕքսԵՋԵն հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից: Հետազոտությունն իրականացրել է Բրեվիսը: